Վերջին խօսքերի հետ նա ձեռքով խփեց իր ընկերուհիներից մէկի գլխին, որ դեռ ամուսնացած չէր:

— Իսկ ուրիշի սէրը երբեք չե՞ս գողանում:

— Գողանում եմ, երբ ամուսինս ինձ ծեծում է:

— Քանի՞ ոչխար ունէք:

— Հինգ Հարիւր:

— Հինգ հարիւր ոչխար ունէք, եւ դու այդպէս շալակով ցա՞խ ես կրում:

— Ի՞նչ անեմ, եթէ չկրեմ, ամուսինս ինձ դուրս կանէ եւ մի ուրիշին կբերէ:

Մենք անցանք:

— Միթէ՞ քրդուհիները այդպէս թեթեւ բարք ու վարքի տէր են, — հարցրի երիտասարդից:

— Չի կարելի ասել բոլոր ցեղերի համար: Բայց այդ ցեղը ինչ-որ բոշաների խառնուրդ է: Ընդհանրապէս խօսելով, օրիորդը աւելի ազատ է քրդերի մէջ, քան թէ ամուսնացած կինը, որ տէր ունի եւ մէկի սեփականութիւնն է համարւում:

Հեռոից, Արտոս լեռան ստորոտում, սեւ բծերի նման երեւում էին մի խումբ վրաններ: Արեւի երեկոյեան ճառագայթները թափել էին այդ վրաններրի վրայ շէկ-ծիրանագոյն լոյս: Ինձ թւում էր, որ հրդեհի մէջ այրւում էին նրանք: Արեւը մտաւ, երբ հետզհետէ պատեց խաւարը, ամէն ինչ կորաւ, եւ գեղեցիկ երեւոյթը ընկղմեցաւ անվերջ մթութեան մէջ: Այժմ այնտեղից նշմարւում էին կրակի նշոյլներ, որոնք փարոսի նման ձգում էին մեզ դէպի իրանց կողմը:

Ասլանը ինձ պատմեց, որ այնտեղ բնակւում է քրդերի մի նշանաւոր շէյխ, որ մեծ ազդեցութիւն ունի բոլոր ցեղերի վրայ, որին համարեա պաշտում են եւ մարգարէի հաւասար յարգանք են մատուցանում: Բոլոր քրդերը նրա գլխովն են երդւում. «շէյխի գլուխը վկա»՝ դա ամենամեծ երդումն է նրանց մէջ: Այն օրը, որ նա բաղանիք է մտնում, բաղանիքի ջուրը քրդերը բաժանում են իրանց մէջ եւ սրսկում են մօրուքների վրայ, որպէս օրհնած ջուր: Ամուլ կանայք նրա ոտքերի հետքերից փոշին հաւաքում են ինչ-որ կախարգական արարողութիւններ են կատարում, որ զաւակ ունենան:

— Բայց նա չափազանց մոլեռանդ է եւ քրիստոնեաների թշնամի, — աւելացրեց Ասլանը: — Նրա ատելութիւնը դէպի քրիստոնեաները այն աստիճանի է հասնում, որ իր վրանից դուրս գալու ժամանակ, երբ կամենում է մի